# ՂԱՐԱԲԱՂԻ XVIII ԴԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԻՐԶԱ ՅՈՒՍՈՒՖ ՆԵՐՍԵՍՈՎԻ «ԹԱՐԻԽ-Ե ՍԱՖԻ»-Ի

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

*Միրզա Յուսուֆ Ներսեսովի (Հովսեփ Ներսիսյանց) աշխատությունները մինչև վերջերս հետաքրքրել են հիմնականում ադրբեջանցի ուսումնասիրողներին[1]։ Նա հիմնականում ստեղծագործել է պարսկերեն լեզվով։ Սակայն Ներսեսովը իր գործունեությամբ մեծ ներդրում է կատարել ոչ միայն թյուրքալեզու գրականության ու պարսից պատմագրության բնագավառներում, այլև լուրջ ծառայություն է մատուցել հայ ժողովրդին իր հայրենի Ղարաբաղի պատմությանը նվիրելով իր միակ պատմագրական աշխատությունը՝ «Թարիխ-ե Սաֆի»-ն (պրսկ.—ճշմարտացի պատմություն)։ Պարսկերեն լեզվով շարադրված այս երկի միակ մեզ հայտնի ձեռագիրը գտնվում է Վրաստանի Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտում, Արևելյան լեզուների բաժնում, Բ—195 համարի տակ։ Այն բաղկացած է 149-ը թերթերից, չի հրատարակվել, իսկ ձեռագրի ֆոտոպատճենը մեզ էր տրամադրել պրոֆ. Հ. Դ. Փափազյանը։*

*Հովսեփ («Յուսուֆ»-ը նույն անվան արաբա-պարսկական տարբերակն է) Ներսեսովը ծնվել է 1798 թ. Ղարաբաղի Հադրութ գյուղում, Ահարից[2] վերաբնակված հայ ընտանիքում։ 1804—1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին գերվում է պարսիկ ավարառուների կողմից և քշվում Պարսկաստան[3]։ Այստեղ Ներսեսովը մահմեդականացվում է, կրթություն ստանում, որից հետո 18 տարի աշխատում է պալատական բարձրաստիճան պաշտոնյա Ամիր խան սարդարի դիվանատան («դիվանխանե») որպես գրագիր (միրզա)[4]։*

*Իրանում գտնվելու ժամանակ Ներսեսովը տիրապետում է պարսկերեն ու թյուրքերեն լեզուներին, ուսումնասիրում պարսկական պատմագրությունը և ծանոթանում զանազան ժողովուրդների կյանքին ու բարքերին[5]։*

*1828 թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից հետո Միրզա Յուսուֆը վերադառնում է հայրենի Ղարաբաղ և Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը նրան մկրտում է[6]։*

*Հայրենիքում Ներսեսովը որոշ ժամանակ մանկավարժությամբ է զբաղվում։ 1847—1848 թթ. նա ադրբեջաներեն ու պարսկերեն է դասավանդում Շուշիի Հայոց Թեմական դպրոցում[7]։ Հետագայում նա, ըստ երևույթին, սե-*

---

1 История Азербанджана. Т. 2. с. 936; Г. Абдуллаев. Азербайджан в XVIII веке и его взаимоотношения с Россией. Баку, 1965. с. 41.

2 *14-րդ դարում Ահարը հիշատակվում է որպես Ղարադաղի կենտրոնական բաղաք (Համդալլահ Ղազվինի. Նուզհաթ-ալ-դուլուբ. Թեհրան, 1336 հիջր (պրսկ.) էջ 98)։*

3 *Կենսագրական տեղեկություններ կան «Թարիխ-ե Սաֆի»-ի առաջաբանում, էջ 1ա—3բ։* Сеид-Задэ. Мирза Юсуф Нерсесов.—Известия Азерб. фил. АН СССР 1942. № 9. с. 18—17.

4 *Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 2բ։*

5 *Նույն տեղում։*

6 Сеид-Задэ. Ук. соч., с. 13.

7 *Լեո. Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի. Թիֆլիս, 1914. էջ 204։*

փական նախաձեռնությամբ, բացում է մասնավոր արական դպրոց, որը 1853 թ. ինչ-ինչ պատճառներով փակվում է[8]։

XIX դարի 50-ականների կեսերից Ներսեսովը ծառայության է անցնում Հյուսիսային Դաղստանի զորքերի հրամանատար Գ. Օրբելիանու մոտ որպես թարգմանիչ[9]։

Իր կյանքի այս շրջանում՝ 1854—1855 թթ. է Ներսեսովը գրում «Թարիխ-ե Սաֆին»՝ Գ. Օրբելիանու պատվերով ու իշխան Դ. Ջորջաձեի օգնությամբ[10]։ Այստեղ, Դաղստանի Դեմիր-խան-Շուրա (Ներկայիս Բույնակսկ) քաղաքում հեղինակը 1856 թ. վիմատիպ եղանակով հրատարակում է XVIII—XIX դարերի թյուրքալեզու պոեզիայի իր հավաքածուն՝ «Վաղիֆի ու նրա մյուս ժամանակակիցների բանաստեղծությունների ժողովածու» վերնագրով, որ նա սկսել էր կազմել դեռ 1828 թ. Միրզաջան Մադաթովի խորհրդով[11]։

Ներսեսովը իր ժամանակի պարսկերեն ձեռագրերի լավագույն ընդօրինակող-մատենագիրներից (պրսկ.—xoshnevis) էր։ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են նրա ընդօրինակած երկու պարսկերեն ձեռագրեր[12]։

Միրզա Յուսուֆ Ներսեսովի մահվան ստույգ ժամանակը հայտնի չէ։ Սեիդ-Զադեն հերքում է նրա մահվան Յ. Ս. Ղամբարովի նշած 1859 թ.։ Սակայն հայտնի չէ, թե ինչ աղբյուրների վրա է հենվում նա՝ պնդելով, թե Մ. Յ. Ներսեսովը մահացել է 1864 թ. Ղարաբաղում[13]։

«Թարիխ-ե Սաֆի» աշխատությունը ընդգրկում է բավական լայն ժամանակահատված՝ սկսած մարդկության նախապատմական շրջանից մինչև 1828 թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումը։ Աշխատությունը բաղկացած է առաջաբանից, 9-ը գլուխներից և վերջաբանից։ Պատմագրական այս երկի միայն 8-րդ և 9-րդ գլուխներն ունեն պատմական սկզբնաղբյուրի արժեք և նվիրված են Ղարաբաղի XVIII—XIX դարերի պատմությանը։ Հեղինակը XVIII դարի իրադարձությունները նկարագրելիս օգտվել է Միրզա Մեհդի խան Աստրաբադիի «Թարիխ-ե Նադիրի» (պրսկ.)[14], Մ. Չամչյանի «Հայոց Պատմություն»[15], Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-Նամե»[16] (ադրբ.) աշխատություններից, ժողովրդական ավանդություններից և մեզ անհայտ այլ աղբյուրներից։ Չնայած իրենց որոշ կոմպիլյատիվ բնույթին՝ «Թարիխ-ե Սաֆի»-ի հատվածները կարևոր են Ղարաբաղի XVIII դարի պատմության ուսումնասիրության համար։ Ուստի՝ ուսումնասիրողների ուշադրությունն ենք հրավիրում դրանցից մի քանիսի վրա, որոնք շարադրված են երկի 8-րդ գլխում։ Այդ գլուխը կրում է «Հայոց թագավորության պատմական անցյալի, խամսայի և Ջևանշիրի մահալների, այնտեղի մելիքների ծագման ու սերնդաբանության մասին» խորագիրը[17]։

Ներսեսովին, ընդհանրապես, խիստ մտահոգում էին իր հայրենի Ղարաբաղում մահմեդական տարրի հաստատման և ուժեղացման հանգամանքները։ Ուստի նա հարկ է համարում Հայաստանի (Արմենիայի) հողերի թվին

---

8 АКАК, т. 11, с. 739.

9 Сеид-Задэ. Указ. соч., с. 13.

10 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 3բ։

11 Ներսեսով. Վաղիֆի ու նրա մյուս ժամանակակիցների բանաստեղծությունների ժողովածու. Դեմիրխան-Շուրա, 1856, էջ 3—6, Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), պրսկ. տպ. գրքերի ֆոնդ, 158։

12 ՄՄ, արաբատառ ձեռագրերի ֆոնդ, ձեռ. 579, 239։

13 Сеид-Задэ. Ук. соч., с. 17.

14 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 37բ։

15 Նույն տեղում, էջ 81ա։

16 Համտ. Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 77բ—84բ և Мирза Адигезаль-бек. Карабаг-наме. Баку, 1950, с. 49—96.

17 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 74ա։

Ղարաբաղի պատկանելության փաստը արձանագրելուց հետո նշել, որ «օտար բանակները» տարիներ շարունակ ավերել են իր հայրենիքը. «Արազի և Ատրպատականի մահմեդական բնակչության մի մասը գալիս բնակություն է հաստատում մինչև Ալազան գետը ձգվող տարածքներում՝ Ղարաբաղում, Շաքիում ու Շիրվանում»[18]: Հեղինակի այս միտքը հաստատում են միջնադարյան սկզբնաղբյուրները, որոնցում արտացոլված այս իրողությունը մանրամասն քննված է Հ. Դ. Փափազյանի «Ագրարային հարաբերությունները Արևելյան Հայաստանում» աշխատությունում[19]: Անընդհատ տեղի ունեցող պատերազմների և հատկապես XVII դարի բռնագաղթերի հետևանքով ավերված հայ բնակավայրերում բնակություն էին հաստատում աստիճանաբար նստակյաց կյանքի անցնող թյուրքական ու քրդական ցեղերը: Այդ գործընթացը հատկապես զգալի ծավալների է հասնում Արարատյան դաշտի ստորին հատվածներում, Շարուրում, Նախիջևանում, ինչպես նաև Մակվի, Խոյի, Սալմաստի ու Ղարաբաղի՝ Արաքսին հարակից շրջաններում[20]:

Վերը նշված պատմական իրողությունն է արձանագրում Ներսեսովի վկայությունն այն մասին, որ Արցախի հարթավայրային շրջանները ևս անցյալում բնակեցված են եղել հայերով և թշնամական բանակների ու քոչվոր ցեղերի արշավանքների հետևանքով հայազրկվել են: Հեղինակը դավով է խոսում այն մասին, որ զրկվելով իրենց նախկին բնակիչներից, Ղարաբաղի բնակավայրերի ու գյուղերի մի մասը իր ժամանակներում «ամայի ու անմշակ մնալով՝ ավերակների են վերածվել» և քոչվոր ցեղերի համար դարձել են ժամանակավոր կացարաններ[21]:

Ամայացած բնակավայրերի թվում, որոնցում իր ժամանակ պատմական հուշարձաններ ու հնություններ էին պահպանվել, Ներսեսովը հիշատակում է Զառուգարիը, Մեհը, Բարդա՛ և Բաբի քաղաքները[22]:

Հեղինակը իրավացի է, երբ Զառուգարիի բնակավայրը տեղադրում է Գանձակի և Ղարաբաղի սահմանագծին: Այն XIII—XVII դդ. հիշատակվող Տպէ, ամառանոցն է, որը գտնվում էր Տուտխուի հովտում: XIX դարում այդ անվանումը տեղանաստվում է նոր տարածքում գտնվող գյուղերից մեկի, «Թերեսա ամառանոցի վրա»[23]: «Զառուգարիի» անունը կրող բնակավայրը հիշատակվում է XVIII—XIX դդ. պատմական սկզբնաղբյուրներում[24]:

Իհարկե, չափազանցություն է հեղինակի այն անդրադարձը, թե Ղարաբաղի տեղական ղոչանների բնակությունը մեծ մասամբ ժամանակավոր է եղել, սակայն այն, որ այդ տարածքում հնում հայտնի են եղել մի շարք ծագումն բարձրաբերձ, որոնցից են Բարդա՛ն, Գանձակը և Բայլականը[25], պատմական փաստ է: Այդ բարձրաբերձերը ստանում հանանվող Բարդա՛ն (Պարտավն) էր, որը հիմնվում VI դարի սկզբին. Սասանյան Կավատ I-ի (մ. թ. 488—531 թթ.)

---

18 Նույն տեղում, էջ 76բ:

19 А. Д. Папазян. Аграрные отношения в Восточной Армении. Ереван, 1972, с. 57.

20 Նույն տեղում, էջ 64:

21 Ներսեսով. Նշվ. ձեռ., էջ 76բ:

22 Նույն տեղում, էջ 76ա—բ:

23 Ա. Հ. Հակոբյան, Հ. Ե. Սիմոնյան. Դադիվանքի նորահայտ արձանագրությունը և Տպէի տեղադրության հարցը.—«Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1998, № 1—2, էջ 231:

24 И. Шопен. Исторический памятник Армянской области в эпоху ее присоединения к Российской империи. СПб. 1852, с. 484. Թեզրիրաթ-այ-մուղուլ. Թեհրան, 1332 հիջր. (պրսկ.), էջ 73:

25 Բայլականը հիմնվում է Սասանյան Կավատ I-ի կողմից VI դարի սկզբին, տե՛ս А. А. Акопян. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987, с. 122.

կողմից, վերածվում է Աղվանից մարզպանության մայրաքաղաքի[26]։ Գտնվելով առևտրական ճանապարհների հատման վայրում, քաղաքը արաբների տիրապետության շրջանում ևս շարունակում է մնալ որպես տարածաշրջանի գլխավոր քաղաք[27]։

Հեղինակը նշում է, որ «Միլ» քաղաքի անվան հնագույն ձևը «Մեհր»-ն է[28]։ Այսպիսով Ներսեսովը Միլ քաղաքը նույնացնում է Մովսես Կաղանկատվացու հիշատակած Միհրավան քաղաքի հետ, որը Ուտիք նահանգում հիմնում է Սասանյան Խոսրով շահի տոհմից Աղվանքի մարզպան նշանակված Միհրը[29]։ Ըստ Ս. Ջալալյանի, Միլը մեծ քաղաք է եղել «շինեալ ի լայնարձակ դաշտին Ուտիոյ, մերձ ի խառնուրդս վերոգրեալ (Արաքս և Կուր) գետոց»[30]։ Միլ քաղաքի հետ է կապվում Ղարաբաղի նույնանուն հարթավայրի անվան ծագումը։ Արցախահայությունը ավանդություններ է հյուսել Միլ և Բաբի կամ Պապե քաղաքներից մնացած ավերակների վերաբերյալ։ Ըստ այդ ավանդությունների, Դիզակի գավառի Որդնաշատ գյուղի բնակիչները համարվում էին հնագույն Միլ քաղաքից եկած[31]։ Պապե բնակավայրի մասին Առ. Կոստանյանցի «Արցախի պատմության» մեջ հետևյալն ենք կարդում. «Շեն և պատ էին ամենայն քաղաքք և ավանք ի դաշտային տեղիս, լի էր բնակութեամբ ի Երասխ գետոյ մինչև ի Կուր գետն։ Ի բերրի դաշտն Մուղանու կայր գիւղաքաղաք ոմն մերձ ի Երասխ գետն, որոյ հիմնարկողին անունն եդին ի վերայ նորա։ Ինքն պարթև և անունն Պապի. այժմ ի բերանս ամենեցուն Պապէ է»[32]։Ստույգ տվյալներ կան այդ բնակավայրի տեղադրության վերաբերյալ։ Ս. Ջալալյանը այն տեղադրում է Հադրութից դեպի Արաքսը ձգվող հովտում[33], որը համապատասխանում է Դիզակի շրջանում Ջերբերն գետի ափին Ղևոնդ Ալիշանի հիշատակած Պապի անունով գյուղ-ամրոցին[34]։

Հայ մելիքների ուժեղացումն ու մելիքությունների ամրապնդումը Հայաստանի պատմության XVI—XVIII դդ. կարևոր իրողություններից են։ «Մելիք», ինչպես նաև «բեկ» տերմիններին զուգահեռ այդ ժամանակաշրջանում «պարոն», «տեր», «իշխան» և «պարոն-տեր» տերմինների գործածությունը այն միտքն է հուշում, որ օտար ծագման այդ անվանումների տակ պահպանվել էին նախորդ շրջանների ֆեոդալական համակարգին բնորոշ տիտղոսները[35]։ Այս առումով արժեքավոր է Ներսեսովի վկայությունն այն մասին, որ Գորիսում, Խնձորեսկում, Տեղում նույնպես իշխում էին հայտնի մելիքներ, որոնք «իրենց հավատի համար անձնուրաց պայքար են մղել»[36]։ Նրա այս միտքը հաստատվում է Ե. Լալայանի կողմից XIX դարում Սյունիքում շրջագայության ընթացքում հավաքած պատմաազգագրական նյութերով, որոնց համաձայն Գորիսում իշխում էին Մելիք-Հուսեինյանները, Տեղում՝ Մելիք-Բախտամյանները և այլն[37]։ XVII—XVIII դդ. մելիքություններ էին կազմվել Ս'

26 А. А. Акопян. Ук. соч., с. 122

27 В. В. Бартольд. Сочинения. Т. 7. М., 1971, с. 213.

28 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 76ա։

29 Մովսես Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի. Երևան, 1969, էջ 133։

30 Ս. Ջալալեան. Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան. Հ. 2, Տփխիս, 1842, էջ 361։

31 Մ. Բարխուդարյանց. Արցախ. Բաքու, 1895, էջ 67, 68։

32 Առ. Կոստանյանց. Արցախի պատմություն. Հ. 1, ՄՄ, ձեռ. 7822, էջ 36։

33 Ս. Ջալալեան. նշվ. աշխ., էջ 263։

34 Ղ. Ալիշան. Արցախ. Երևան, 1993, էջ 121։

35 П. Т. Арутюнян. Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века. М., 1954, с. 48.

36 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 80ա։

37 Ե. Լալայան. Զանգեզուր (Պատմական համառոտ տեսություն).—«Ազգագրական հանդես». 1898. № 2. գիրք Դ, էջ 8։

սիանում, Կապանում, Լոռիում, Երևանի և Գանձակի խանություններում։ Ներսեսովը հիշատակում է Սիսիան մահալի «նշանավոր մելիքներ» Պողոսի, Ղազարի ու Աղաբեկի անունները[38]։

Մ. Չամչյանի «Հայոց պատմության» մեջ Ներսեսովի նշած անուններից հիշատակվում է միայն սիսիանցի Մելիք Ղազարը, որը Նախիջևանի կառավարիչ Հեյդարի դեմ մղված պայքարում սպանվում է[39]։ Մյուս անունները որևէ այլ աղբյուրում մեզ չեն հանդիպել, ըստ երևույթին դրանք պահպանվել էին ժողովրդական զրույցներում, որոնց Ներսեսովը ծանոթ էր։ Ըստ Ե. Լալայանի, Սիսիանի նշանավոր մելիքներից էին Անգեղակոթում իշխող Մելիք-Սաֆրազյանները և Բռնակոթի Մելիք-Թանգյանները[40]։

XVIII դարի սկզբին Սեֆյան Պարսկաստանը խիստ թուլանում է աֆղանների արշավանքի հետևանքով։ Օգտվելով քաղաքական բարենպաստ դրությունից՝ Արևելյան Հայաստանի հայ բնակչությունը ազատագրական պայքար է սկսում Պարսկաստանի տիրապետության և հարկահան քոչվոր ցեղերի դեմ։ 1720-ական թթ. ազատագրական պայքարը լայն թափ է ստանում Սյունիքում և Ղարաբաղում։ Պարսկաստանի թուլացումից որոշում է օգտվել նաև Օսմանյան Թուրքիան, որը 1720-ական թթ. կեսերից լայնամասշտաբ ռազմական գործողություններ է ձեռնարկում նրա տարածքներին տիրելու նպատակով։ Թուրքական զորքերի հարձակման ուղղություններից մեկն անցնում է Արևելյան Հայաստանով։ Թուրքիայի ձեռնարկած արշավանքին ուժեղ դիմադրություն են ցույց տալիս տեղի հայ բնակչությունը և հատկապես ազատագրական պայքարի մարտիկները։

Հիմնվելով ժողովրդական զրույցների ու ավանդությունների, ինչպես նաև Մ. Չամչյանի «Հայոց պատմության» հաղորդումների վրա, Ներսեսովը անդրադառնում է Դավիթ Բեկի գլխավորած Սյունիքի ու Արցախի սղնախների[41] ազատագրական կռիվներին։ Հեղինակի վկայությամբ, «Ավան յուզբաշին ամրանում է Խազինե-դարասի[42] կոչված ձորում և անվախ կռիվներ մղում»։ Նա արժեքավոր տեղեկություն է հաղորդում նաև Ավան յուզբաշու և նրա քաջերի Չավնդուրում օսմանյան զորքերի դեմ մղած հաղթական կռվի մասին. «Ասում են, որ... թվականին օսմանյան բանակը գալով Երևանը, Թիֆլիսը և Գանձակը գրավում է. Ավան յուզբաշին իր մարտիկներով գիշերը գրոհում է Ղափանի Չավնդուրի (Զուլղուր)[43] շրջակայքում կանգ առած օսմանյան 7000-անոց բանակի վրա և... մեծ մասին կոտորում»[44]։

1724—1725 թթ. օսմանյան զորքերի Անդրկովկասյան արշավանքները ընթանում էին երկու ուղղություններով՝ Թբիլիսի—Գանձակ—Ղարաբաղ և Երևան—Խոյ—Թավրիզ[45]։ XVIII դարի 20-ական թթ. Սյունիքի և Արցախի ազա-

---

38 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 80ա։

39 Մ. Չամչեան. Պատմութիւն հայոց. հ. Գ, Երևան, 1984, էջ 843։

40 Ե. Լալայան. Սիսիան.—«Ազգագրական հանդես», գիրք Գ, Թիֆլիս, 1898, էջ 116—117։

41 Պատմական գրականության մեջ «սղնախ» տերմինը օգտագործվում էր «ապաստարան» իմաստով։ XVIII դարի 20-ականներին այն ստանում է նոր իմաստ և գործածվում նախ և առաջ «ամրություն, ռազմական կազմակերպություն» իմաստով. այս մասին ավելի մանրամասն տե՛ս П. Т. Арутюнян Ук. соч., с. 223—224.

42 Այդ անվանումն էր կրում Շուշիի հարավ-արևելյան կողմում գտնվող խոր ձորը, որտեղ ժողովրդական ավանդության համաձայն Աղա Մուհամմադ խանի 1795 թ. ղարաբաղյան արշավանքի ժամանակ Իբրահիմ խանը թաքցրել էր իր գանձերը. տե՛ս Հակոբ Զարարյանց. Պատմութիւն Արցախի. ՄՄ, ձեռ. 2734, էջ 6։

43 Այս շրջանը հեղինակը նշում է «Զուլդուր» անունով (տե՛ս Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 79բ, 80բ), որը չպետք է շփոթել Արևմտյան և Արևելյան Հայաստանի սահմանագծին գտնվող «Զրլդըր» լեռների և նույնանուն լճի հետ։

44 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 80բ։

45 П. Т. Арутюнян. Ук. соч., с. 167, 168

տագրական պայքարի պատմությանը վերաբերող փաստագրական նյութերում հիշատակություն կա այն մասին, որ 1724 թ. գարնանը Ղարաբաղի սղնախները Ավան յուզբաշու և Իվան Կարապետի գլխավորությամբ 2000 մարդկանցով օգնության էին գնացել ղափանցիներին՝ նրանց իսկ խնդրանքով[46]։ Ըստ երևույթին հենց այս շրջանում են տեղի ունեցել Ներսեսովի նկարագրած դեպքերը։ Հեղինակի այս կարևոր տեղեկությունը Սյունիքի ու Արցախի ազատագրական պայքարի պատմությանը նոր մանրամասներ է ավելացնում։

Թե՛ սղնախներում և թե՛ Ղափանում ազատագրական պայքարի մասնակիցները զենքի ու դինամիտների պակասություն էին զգում, քանի որ շրջապատված էին թշնամիներով։ Ինչպես վկայում է Արցախի ազատագրական պայքարի ղեկավարներից մեկը հանդիսացող Թարխան յուզբաշին, յուրաքանչյուր զինվոր ուներ իր զենքը, և տեղացիներն իրենք էին վառոդ պատրաստում, սակայն վառոդի պակասություն այնուամենայնիվ զգում էին[47]։

Հետաքրքրական և ուշագրավ է այս առումով Ներսեսովի վկայությունը Ղարաբաղի Ահար քաղաքի հայության կոտորածի պատճառների մասին։ Ըստ «Թարիխ-ե Սաֆի»-ի հայ ունևոր բնակչությանը նախանձելով՝ այնտեղի մահմեդականները շահի մոտ գրպարտում են, թե՝ «հայերը այնքան են հարստացել, որ չեն ցանկանում Իրանին հպատակվել։ Ավան Յուզբաշուն վառու գնդակ են ուղարկում, որպեսզի գա իրենց էլ ազատի»[48]։ Ինչպես վերը արդեն նշել ենք, հեղինակի հայրը Ահար քաղաքից էր, ուստի ամենայն հավանականությամբ Ներսեսովի այս վկայության աղբյուրը այդ դեպքերին ականատես նրա հոր հիշողություններն էին։

Թավրիզում տեղի ունեցած նմանատիպ մի իրադարձության մասին է պատմում ագուլիսցի հայ վաճառական Աբելը, որի համաձայն «երեսուն մարդ [հայեր] շահի հրամանով պատժվեցին, որովհետև նրանք տրճիճ և վառոդ էին դնել և տանում էին Ղափան»[49]։

Թեև Ներսեսովը ժխտում է Ահարի հայության իրական օժանդակությունը Սյունիքի ու Արցախի ազատագրական կռիվներին և այդ մասին պատմական սկզբնաղբյուրներում որևէ վկայություն չկա, չի բացառվում, որ Ահարի հայ բնակիչները իսկապես օգնած լինեին ազատագրական պայքարի մասնակիցներին, քանի որ այդ շրջանում պայքարը օտար բռնակալների դեմ ստացել էր ժողովրդական բնույթ և ընդգրկել Հայաստանի արևելյան շատ շրջաններ[50]։

XVIII դարի 30-ականների վերջին Նադիր շահի հրամանով Ղարաբաղի հինգ հայկական մելիքություններ՝ Գյուլիստանը, Ջրաբերդը, Խաչենը, Վարանդան և Դիզակը միավորվում են մեկ մարչական միավորի՝ Մահալլ-ե Խամսա-յի (արաբ. «հինգ գավառներ») մեջ՝ դրվելով Իրանի շահի անմիջական ենթակայության տակ[51]։ «Թարիխ-ե Սաֆի»-ի 8-րդ գլխի մի առանձին ենթաբաժնում, որը վերնագրված է «Ղարաբաղի Խամսայի մահալների ու նրա մելիքների ծագման մասին», հեղինակը խոսում է XVIII դարի Ղարաբաղի 5 հայկական մելիքություններից յուրաքանչյուրի տարածքի[52], նրանցում մշակ-

---

46 Ա. Գ. Աբրահամյան. Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից. Երևան, 1953, էջ 82։

47 Հ. Ա. Կնյազյան. Ազատագրական պայքարը Դավիթ Բեկի գլխավորությամբ. Երևան, 1963, էջ 66։

48 Ներսեսով. նշվ. աշխ., էջ 79 բ։

49 Հ. Ա. Կնյազյան. նշվ. աշխ., էջ 66։

50 Նույն տեղում, էջ 65։

51 Հայ ժողովրդի պատմություն. հ. 4, Երևան, 1972, էջ 186։

52 Խամսայի մելիքությունների տարածքների վերաբերյալ «Թարիխ-ե Սաֆի»-ի տեղեկությունների մասին տե՛ս Բ. Կոստիկյան. Ղարաբաղի պատմության լուսաբանությունը 19-րդ դարի պատմագրության էջերում.—Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ. Երևան, 1998, № 17, էջ 80—84,

վող գյուղատնտեսական կուլտուրաների, մելիքների ծագման ու նշանավոր մելիքների կյանքի արժանահիշատակ դեպքերի մասին[53]։

Խամսայի մելիքությունների կիսանկախ վիճակը, որը, անշուշտ, դրական նշանակություն ուներ արցախահայության համար, երկար չի տևում։ XVIII դարի 40-ական թթ. վերջին Ղարաբաղի հարթավայրային տարածքներում բնակվող քոչվոր մահմեդական ցեղերը համախմբվում են ջևանշիր[54] ցեղի առաջնորդ Փանահ Ալիի շուրջ, որը շուտով հանդես է գալիս Ղարաբաղի խան դառնալու հավակնություններով։

Պարսկական պետության թուլացման ու նրա գահին հավակնողների միջև երկարատև գահակալական կռիվների հետևանքով, բացի Ղարաբաղից, Անդրկովկասի ու Ատրպատականի տարածքներում 1747 թ. հետո ստեղծվում են հետևյալ պետական կազմավորումները՝ Վրաստանի թագավորությունը, Երևանի, Նախիջևանի, Մակվի, Ղարադաղի, Ուրմիայի, Գանձակի, Ղուբայի, Բաքվի, Շիրվանի, Շաքիի, Թալիշի, Արդեբիլի, Մարաղայի, Սոլուջ-Բուլաղի խանությունները[55]։ Այդ մանր իշխանությունները XVIII դարում անվերջ պատերազմներ էին մղում միմյանց դեմ. դրանց մի մասին անդրադառնում է նաև Ներսեսովը։ Ըստ նրա, խանության իրավունքը ջևանշիր ցեղի առաջնորդ Փանահ Ալին ստանում է Ատրպատականի կառավարիչ Ամիր Ասլան Ղրղլուից նրան հպատակություն հայտնելու համար[56]։

Ինչպես վկայում են այդ ժամանակաշրջանի մյուս սկզբնաղբյուրները, Փանահ Ալին Ղարաբաղի խան է նշանակվում 1748 թ.։ Այսպես, ռուս պատմագիր Բուտկովը հաստատում է Ներսեսովի այս վկայությունը՝ նշելով, որ 1748 թ. Ամիր Ասլանը իր զորքով ներխուժում է Ղարաբաղ, որտեղից օգնական զորք է ուղարկում Թիֆլիսը պաշարած Դուրա խանին, որը, սակայն, հաջողության չհասնում[57]։

Ամիր Ասլան խանը հիշատակվում է դեռ Իրանի Նադիր շահի օրոք՝ 1739 թ. որպես Ատրպատականի բեգլյարբեգ[58]։ Ամենայն համանականությամբ, Նադիր շահի մահից (1747 թ.) հետո, երբ Պարսկաստանը թուլանում է, Ամիր-Ասլան խանը ջանում էր մերականգնել իր իշխանությունը նախկինում իրեն ենթակա տարածքների նկատմամբ։ Նույն 1748 թ. նա արշավանքի է ելնում Ռեգակի Շաքի և կռվում ամենատգի Հաջի Ջելերի խանի դեմ, որը նրան պատերազմ է մատնում և ոչնչում իր երկրից[59]։ Վրացական աղբյուրներում տեղեկություն կա նրա նաև դեպի Երևան կատարած արշավանքի վերաբերյալ[60]։

---

53 Ներսեսով. նշվ. աշխ., էջ 77բ։

54 Այն թյուրքական ու քրդական մանր ցեղերից կազմված օրուզիֆի (թրք.—32) արհեստական ցեղային միության մեջ մտնող ցեղերից էր և նրա առաջնորդը հանդիսանում էր ամբողջ օրուզիֆի միության առաջնորդը (И. П. Петрушевский. Очерки из истории феодальных отношений Азербайджана и Армении в XVI—XVIII веках Л., 1949, с. 136. Ռեգակուի խան ջեանշիր ցեղը ծագումով համարում է Թուրքեստանի մոնղոլական ցեղերից (տե՛ս Ռեգակուի խան Հեդայաթ. Ռոուզաթ-աս-Սաֆա-ի նասերի. հ. 9, Թեհրան, 1339 հիջր. (պրսկ.), էջ 296)։ Կարծում ենք սակայն, որ թյուրքալեզու այդ ցեղը իր անունը ստացել է Ղարաբաղի նույնանուն տեղանունից, քանի որ Ջևանշիր անունով մի շարք նշանավոր անձինք են հիշատակվում հայ միջնադարյան պատմագրության մեջ, մասնավորապես, այդ անունն է կրել Մեհրյան տոհմից սերող Աղվանքի սպարապետը (տե՛ս Կարանկատվացի, էջ 132—142)։

55 И. П. Петрушевский. Ук. соч. с. 86.

56 Ներսեսով. նշվ. աշխ., էջ 85ա։

57 П. Г. Бутков. Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 гг. Ч. 1. СПб., 1869, с. 236.

58 Армяно-русские отношения во 2-ом тридцатилетии XVIII века. Сборник документов. Т. 3, Ереван, 1978, с. 124.

59 Абдул-Лятиф-эфенди. История шекинских ханов. Баку, 1926, с. 8.

60 Լ. Մելիքսեթ-բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. հ. Դ. Երևան, 1955, էջ 123։

Ներսեսովը Ղարաբաղի Փանահ խանի հակառակորդների թվում առաջինը հիշատակում է Շաքիի Հաջի Չելեբի խանին, որը քոչվոր ցեղերի և Խամսայի մելիքների դրդմամբ մեծ զորքով գալիս, պաշարում է Բայաթ ամրոցում ապաստանած խանին։ Սակայն չկարողանալով հաղթել՝ ձեռնունայն ետ է դառնում։ Րաֆֆին, որը անդրադառնում է նույն իրադարձություններին, նշում է, որ այդ մելիքներն էին Գյուլիստանի Մելիք Յուսուբը և Ջրաբերդի Մելիք Ալլահ-Ղուլի սուլթանը[62]։

Շաքիի Հաջի Չելեբի խանը այդ ժամանակաշրջանի Անդրկովկասի առավել հզոր խաներից էր, որը 1740-ականների կեսերին թոթափել էր Իրանի Նադիր շահի գերիշխանությունը իր երկրի նկատմամբ։ Պարսկական պետության թուլացման պայմաններում նա հավակնություններ էր ցուցաբերում հարևան փոքր խանությունների նկատմամբ։ Պատմական փաստաթղթերը վկայում են, որ Հաջի Չելեբիին հաջողվել է որոշ ժամանակով տիրել Ղարաբաղի տարածքի մի մասին։ Ըստ Ահմեդ-բեկ Ջևանշիրի, Հաջի Չելեբին սկզբում հաղթում է Փանահ խանին, որը ապաստան է գտնում Զանգեզուրի Կարա Մուրթուզա Ղուլի խանի մոտ և միայն մեկ տարի անց քրդական և իրեն հպատակ մյուս ցեղերի օգնությամբ նրան հաջողվում է իր երկրից դուրս քշել Շաքիի խանին[63]։ Գոյություն ունի նաև 1749 թ. մի «թալիղ» (շնորհագիր), որով Շաքիի Հաջի Չելեբի խանը հաստատում է Մելիք-Շահնազարի մելիքական իրավունքը Վարանդայի ու Քոչիզի մահալների նկատմամբ[64]։ Այս փաստաթուղթը վկայում է այն մասին, որ նշված դեպքերը տեղի են ունեցել 1749 թ.։ Ըստ երևույթին, քանի որ Հաջի Չելեբին ճանաչել էր իրենց թշնամի Մելիք-Շահնազարի մելիքական իրավունքը, Խամսայի մյուս մելիքները հեռանում են Շաքիի խանից՝ թուլացնելով նրա դիրքերը Ղարաբաղում։ Այս տեսակետն են հաստատում նաև տեղեկությունները այն մասին, որ հայ մելիքները նույն ժամանակահատվածում Փանահ խանի դեմ պայքարելու համար դիմել են նաև Վրաստանի Թեյմուրազ թագավորի օգնությանը[65]։

Հաջի Չելեբիի տիրապետությունը Ղարաբաղի տարածքի մի մասի նկատմամբ երկար չի տևում։ Ինչպես ասվեց, շուտով Փանահ խանին հաջողվում է նրան ծանր հարված հասցնել Բայաթի մոտ տեղի ունեցած մարտում ու դուրս քշել Ղարաբաղից[66]։

Թերևս հենց այս դեպքերի հետ է կապվում Ջրաբերդի Ալլահ Ղուլի սուլթանի սպանությունը Փանահ խանի կողմից, որին Ներսեսովը նույնպես անդրադառնում է[67]։ Սկզբնաղբյուրներից մեկում նշվում է նրա սպանության թվականը՝ 1749 թ.[68]։ Այդ դեպքում հավաստի է թվում Րաֆֆու այն հիշատակությունը, որի համաձայն Ջրաբերդի մելիքը դավադրաբար ձերբակալվում ու սպանվում է հաշտության պայմանագիր կնքելու նպատակով Փանահ խանի մոտ գտնվելու ժամանակ[69]։

Ղարաբաղի խաները, ջանալով ընդարձակել իրենց ազդեցության շրջանակները, հանդես էին գալիս հարևան թույլ խանությունները իրենց ենթար-

---

61 Ն ե ր ս ե ս ո վ. Նշվ. ձեռ., էջ 82ա։

62 Ր ա ֆ ֆ ի. Խամսայի մելիքությունները. Երկերի ժողովածու. հ. 10, Երևան, 1964, էջ 194։

63 А х м е д-б е к Д ж е в а н ш и р. О политическом существовании Карабахского ханства. Баку, 1961, с. 70.

64 В. Н. Л е в и а т о в. Очерки из истории Азербайджана в XVIII веке. Баку, 1948, с. 121.

65 Մ ե լ ի ք ս ե թ-բ ե կ. Նշվ. աշխ., էջ 127։

66 В. Н. Л е в и а т о в. Ук. соч., с. 121.

67 Ն ե ր ս ե ս ո վ. Նշվ. ձեռ., էջ 83ա։

68 Վ. Հ ա կ ո բ յ ա ն. Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դարեր, հ. 1, Երևան, 1951, էջ 396։

69 Ր ա ֆ ֆ ի. Նշվ. աշխ., էջ 203։

կելու հավակնություններով։ XVIII դարի 40-ականների վերջերից Ղարաբաղի և Վրաստանի միջև ընդհարումներ էին տեղի ունենում Գանձակի խանության վրա գերիշխանություն հաստատելու համար, որոնք փոփոխակի հաջողություններով շարունակվում են մինչև դարի վերջը։

Գանձակի խանության համար մղվող երկարատև պայքարի մի դրվագ է ներկայացված «Թարիխ-ե Սաֆի»-ի 8-րդ գլխի մի առանձին բաժնում, որը վերնագրված է «Փանահ խանի ու մյուս խաների կալանավորումը Հերակլ վալիի կողմից»։ Ըստ Ներսեսովի, Ղարաբաղի Փանահ խանը, դաշնակցելով Ղարադաղի Քյազիմ խանի, Նախիջևանի Հեյդար Ղուլի խանի ու Գանձակի Շահվերդի խանի հետ, մտադրվում է պատժել Շաքիի մեծամտացած Հաջի Չելեբիին։ Այդ նպատակով նա փորձում է իր կողմը գրավել նաև «Վրաստանի վալիին»[70], որին բարեկամական զրույցի է հրավիրում։ Բայց վալին նրան ու հանդիպման եկած մյուս խաներին կալանավորում է, իսկ Հաջի Չելեբին վալու դեմ կռվի է ելնում ու խաներին ազատում»[71]։ Հեղինակը չի նշում այդ դեպքերի թվականը, սակայն այլ պատմական սկզբնաղբյուրների վկայությունների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք հավաստի են և տեղի են ունեցել 1752 թ.[72]։

XVIII դարի 40-ականների վերջին Վրաստանի թագավորությունը ջանում էր իր գերիշխանությունը հաստատել Երևանի ու Գանձակի խանությունների վրա[73]։ Սակայն այդ խանությունների նկատմամբ հավակնություններ ուներ նաև Ղարաբաղի Փանահ խանը։ 1749 թ. մի քանի խաների հետ դաշնակցելով Փանահ խանը հանդես էր եկել Վրաստանի դեմ։ Երևան ձեռնարկած մի անհաջող արշավանքի ժամանակ զոհվել էին Փանահ խանի որդին և եղբայրը[74]։ 1750 թ. Փանահ խանը հարձակվում է Գանձակի վրա, սակայն վրացական զորքերը նրան պարտության են մատնում և դուրս քշում այնտեղից[75]։ Որոշ տեղեկությունների համաձայն, 1751 թ. Փանահ խանը, ինչպես նաև Արդեբիլի ու Նախիջևանի խաները հպատակություն են հայտնում Վրաստանի Թեյմուրազ թագավորին և հաշտություն կնքում նրա հետ[76]։ Հավանաբար, այս է պատճառը, որ Շաքիի ուժեղացած Հաջի Չելեբի խանի դեմ պայքարելու համար նշված խաները դիմում են Վրաստանի թագավորի օգնությանը։ Սակայն, ինչպես վկայում են վրացական աղբյուրները, վրաց թագավորի ունեցած անվստահությունը խաների նկատմամբ[77], իսկ որոշ աղբյուրների համաձայն այդ խաների բացահայտ դավաճանությունը[78], պատճառ են դառնում, որպեսզի Վրաստանի թագավոր Թեյմուրազը նրանց ձերբակալի։

Փանահ խանը Ղարաբաղում իր իշխանությունը ամրապնդելու ճանապարհին կանգնած գլխավոր խոչընդոտներից մեկը համարում էր ուժեղ հայ մելիքությունների գոյությունը։ Այդ պատճառով նա երկարատև պայքար է սկսում հայ մելիքների դեմ։ Փանահ խանի առաջին զոհը, ինչպես վերը արդեն նշել ենք, դառնում է Ջրաբերդի Մելիք Ալլահ Ղուլի սուլթանը։

Ներսեսովի տեղեկությունները Խաչենի մելիքների դեմ պայքարի հանգամանքների մասին[79] հաստատվում են այլ աղբյուրների հաղորդումներով։

---

70 Վալի—Սեֆյան Պարսկաստանում կառավարման ապարատից դուրս ամենաբարձր իշխան։ Վալիները 4-ն էին, որոնցից մեկն էլ Վրաստանի թագավորն էր (տե՛ս Մինորսկի. Սազման-և էդարի-է հոքումաթ-ե Սեֆևի. Թեհրան, 1338 հիջր (պրսկ.), էջ 76)։

71 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 86բ—87ա։

72 Մելիքսեթ-բեկ. նշվ. աշխ., էջ 130, П. Г. Бутков. Ук. соч., с. 237.

73 Մելիքսեթ-բեկ. նշվ. աշխ., էջ 126—132։

74 П. Г. Бутков. Ук. соч., с. 387.

75 Մելիքսեթ-բեկ. նշվ. աշխ., էջ 130։

76 Армяно-русские отношения во 2-ом тридцатилетии XVIII века. Т. 3, с. 266.

77 П. Г. Бутков. Ук. соч., с. 390.

78 Նույն տեղում։

79 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 88ա։

Ներսեսովի նշած խաչենի Մելիք Ուլուբաբի թոռը, որը ամրանալով Բալլուղայա բերդում, համառ պայքար է մղում Փանահ խանի զորքերի դեմ, Բաֆֆու երկում հիշատակվում է Հասան-Ջալալյան Մելիք Ալլահվերդի անունով[80]։ Այն, որ Հասան-Ջալալյանների տոհմից սերած այդպիսի մարդ փրոք եղել է XVIII դարում, հաստատվում է Արցախի վիմագրական նյութերով։ 1849 թ. վախճանված Հասան-Ջալալյան Սովսեպ վարդապետի տապանաքարի վրա կարդում ենք հետևյալը. «Այս է տապան Սոսէս խաչակիր վարդապետին, որ է ազգէն Ջալալ Իօլին, որ է որդի Մէլիք Ալավերտին եւ եղբայր էր խաչակիր Սրեմիա քահանային»[81]։

Հիշատակելով Մելիք-Շահնազար II-ի դավաճանական արարքները՝ Ներսեսովը վկայում է նաև Փանահ խանի իշխանության սկզբնական շրջանում Վարանդայի մելիքի խանին ցույց տված դրամական օժանդակության մասին։ Հեղինակը իրավացիորեն ընդգծում է Մելիք-Շահնազարի վճռորոշ դերը Ղարաբաղի խանների դիրքերի ամրապնդման հարցում, մեջբերելով մելիքի հետևյալ խոսքերը ուղղված Ղարաբաղի խանին. «Ի՞նչ ես անհանգստանում, ահա արդեն 7 տարի է, ինչ քո զորքը ընտիր կորեկով եմ պահում»[82]։

Վարանդայի Մելիք-Շահնազարյանները Ղարաբաղի հարուստ մելիքներից էին, և նրանք իրոք ի վիճակի էին փողով օգնելու խաներին։ Մելիք-Հումշուդ Մելիք-Շահնազարյանի վկայությամբ, 1797 թ. իր հետ թշնամացած Իբրահիմ խանը իրենից որպես տուգանք վերցնում է 70000 ռ., այդ շրջանում գրեթե սույքան գումար նրանից բռնագրավում է նաև Շուշին նվաճած Իրանի Աղա Մուհամմադ շահը[83]։ XVIII դարում Մելիք-Շահնազարյաններին էին պատկանում Ղարաբաղի 71 բնակավայր[84]։

Փանահ խանի զորքերին համառ դիմադրություն են ցույց տալիս Ջրաբերդի սպանված Ալլահ Ղուլի սուլթանի եղբայր Աթամը և Գյուլիստանի Մելիք Հովսեփը։ Ներսեսովը իրավացիորեն նշում է, որ այդ պայքարը տևում է շուրջ 4—5 տարի, որի ընթացքում խանը բազմիցս հարձակվում է նրանց ապաստարանը դարձած Ջերմուկ ամրոցի վրա, սակայն չի կարողանում գրավել[85]։ Վերոհիշյալ մելիքների՝ Փանահ խանի դեմ մղած երկարատև պայքարը, որի առաջին փուլը (նախքան նրանց Գանձակ հեռանալը և այնտեղից վերադառնալը) շարունակվել է մինչև 1755 թ., նկարագրվում է այդ շրջանի նաև այլ սկզբնաղբյուրներում[86]։ Ներսեսովը պատմում է կռիվների ընթացքում մելիքների տնտեսությանը հասցված ծանր վնասների մասին[87], որի պատճառով էլ, ինչպես վկայում է վրաց պատմագիր Օթար Թումանովը, «Սղնախում[88] հացի թանկություն է սկսվում»[89]։ Այսպիսով այդ կռիվների հետևանքով ստեղծված տնտեսական կացությունն էր պատճառը, որ վերոհիշյալ մելիքները հեռանում են Ղարաբաղից։

Ղարաբաղի խամսայի մելիքություններն իրեն հնազանդեցնելու համար Փանահ խանի մղած համառ պայքարի մասին խոսելիս Ներսեսովը գովաբանում է Դիզակի Մելիք Եսայու քաջությունը, նրա ցուցաբերած ուժեղ դիմա-

---

80 Բաֆֆի. նշվ. աշխ., էջ 201։

81 Դիվան հայ վիմագրության, պրակ 5, Արցախ. Երևան, 1982, էջ 69։

82 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 78բ։

83 Армяно-русские отношения в 3-м тридцатилетии XVIII века. Т. 4, Ереван, 1990, с. 252.

84 И. П. Петрушевский. Ук. соч., с. 116.

85 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 83բ։

86 Մելիքսեթ-բեկ. նշվ. աշխ., էջ 107։

87 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 83բ։

88 Քանի որ Ջրաբերդը ևս XVIII դարի սկզբի ազատագրական կենտրոններից էր և այնտեղ ևս եղել է հայկական սղնախ, այդ անվանումը ամրոցի փոխարեն շարունակում է հիշատակվել նաև հետագայում. տե՛ս Մելիքսեթ-բեկ. նշվ. աշխ., էջ 107, 109, 127։

89 Նույն տեղում, էջ 109։

դրությունը խանի զորքերին։ Ըստ Առ. Կոստանյանցի Փանահ խանի ու Մելիք Եսայու միջև կռիվները տևում են 7 տարի[90]։ Միրզա Յուսուֆը իր երկու հատորոց պատմագրում է այդ երկարատև կռիվներից մի դրվագ, որում Փանահ խանը ծանր պարտություն է կրում։ Իր զորքը կորցրած խանը փախչում է Բայաթի կողմերը և մեկ ամիս ապաստանում այնտեղի անտառներում։ Ի վերջո Շաքիի Հաջի Չելեբի խանի օգնությամբ նա նոր զորք է հավաքում ու նորից պատերազմի ելնում։ Բայց շուտով հաշտության բանակցություններ են սկսվում նրա և Դիզակի մելիքի միջև[91]։

XVIII դարի 50-ականների սկզբին Վրաստանի դեմ պայքարում Շաքիի Հաջի Չելեբի խանը հաճախ էր դաշնակցում Փանահ խանի հետ[92], այնպես որ զարմանալի չէ նրա աջակցությունը՝ Դիզակի մելիքի դեմ պայքարում։ Հաջի Չելեբին մահացել է 1755 թ.[93], ուստի նկարագրվող դեպքերը տեղի են ունեցել մինչև այդ թվականը։

Ներսեսովը անճշտություն է թույլ տալիս Դիզակի Մելիք Եսայու սպանության ժամանակի հարցում։ Ըստ «Թարիխ-ե Սաֆի»-ի, վերջինս դավադրաբար սպանվում է Փանահ խանի հետ հաշտության բանակցություններ վարելու ընթացքում։ Սակայն դա իրականությանը չի համապատասխանում, քանի որ Դիզակի Մելիք Եսայու տապանաքարի վրա նրա մահվան թվականը նշված է 1781-ը[94], իսկ Փանահ խանը մահացել էր 1762 թ. և նրանից հետո Ղարաբաղում իշխում էր նրա որդի Իբրահիմ խանը։ Ըստ այլ պատմական սկզբնաղբյուրների, երկարատև պայքարից հետո Դիզակի մելիքի ու Փանահ խանի միջև հաշտություն է կնքվում, որից հետո մելիքը սկսում է Ղարաբաղի խանին հարկ վճարել[95]։ 1781 թ. Իբրահիմ խանը, որը աչք էր դրել նրա հարստության վրա[96], կանչում է իր մոտ Մելիք Եսայուն և ձերբակալում։ Ղարաբաղի խանը, ցանկանալով տեր դառնալ նրա հարստությանը՝ սպանել է տալիս Դիզակի Մելիք Եսայուն[97]։ Ներսեսովը իրավացի է, երբ մատնանշում է Մելիք Եսայու ունեցվածքի բռնագրավման ու նրա հետագա սերունդների մի մասի մահմեդականացման, մի մասի էլ քրիստոնյա մնալու փաստերը, որը հաստատում է նաև Առ. Կոստանյանը[98]։

«Թարիխ-ե Սաֆի»-ում հավաստի տեղեկություններ կան Փանահ խանի օրոք հարևան խանությունների հաշվին Ղարաբաղի տարածքային ընդարձակման և այդ խանություններից որոշ քոչվոր ցեղերի՝ մասնավորապես Երևանի խանությանը հպատակ բոլանիների, Վրաստանին հպատակ ջինլի ու դեմիրչի-հասանլու ցեղերի և Նախիջևանի քենգերլու ցեղերի այստեղ գաղթեցնելու վերաբերյալ[99]։ Պատմական աղբյուրները հաստատում են «Թարիխ-ե Սաֆի»-ի տվյալները XVIII դարի 50-ական թթ. Փանահ խանի կողմից Սյունիքի, Մեղրիի, Տաթևի, Սիսիանի, Զանգեզուրի ու Ղափանի «մահալների» նվաճման մասին, որոնք նախքան այդ մտնում էին Նախիջևանի, Ղարադաղի ու Երևանի խանությունների մեջ[100]։ Մ. Ջամչյանի վկայությամբ «Ղափանի կող-

---

90 Նյութեր հայ մելիքությունների մասին. պրակ Ա, Վաղարշապատ, 1913, էջ 44։

91 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 83ա։

92 Մելիքսեթ-բեկ. նշվ. աշխ., էջ 131, 137։

93 В. Н. Левиатов. Ук. соч., с. 125.

94 Դիվան հայ վիմագրության, պրակ 5, Արցախ, էջ 179։

95 М. Нерсисян. Из истории русско-армянских отношении. Кн. I, Ереван, 1956, с. 263-264.

96 Նույն տեղում, էջ 257, Бутков. Ук. соч., ч. I, с. 142.

97 М. Нерсисян. Ук. соч., с. 306.

98 Նյութեր հայ մելիքությունների մասին. պրակ Ա, էջ 81։

99 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 84բ։

100 М. Нерсисян. Ук. соч., с. 265; А. Бакиханов. Гюлистан-ирам, Баку, 1926, с. 128; Армяно-русские отношения в 3-м тридцатилетии XVIII века. Т. 4, с. 213.

մերը», որը նախկինում Նախիջևանի խանության մեջ էր մտնում, Փանահ խանը գրավել էր դեռ մինչև 1750 թ. և այդ թվականին հաշտություն է կնքվում նրա և Հեյդար Ղուլի խանի միջև[101]։

Ներսեսովի հիշատակությունը Երևանի խանությունում բնակվող ցեղերի թվում Յոլասի ցեղի մասին հաստատում է Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատությունը, որում հաղորդվում կա վերոհիշյալ ցեղի կողմից Էջմիածնի վանքապատկան Ոլխիչիքենդ գյուղի նկատմամբ ոտնձգություններ կատարելու մասին[102]։ Իվան Շոպենը քրդական այս ցեղի մասին գրում է, որ XVIII դարի կեսերին Շամշադինի և Ղազախի մահմեդականները լեզգիների օգնությամբ Սևանի մոտակայքում գտնվող Կյոլանի Քոլան վայրն են քշում նրանցից շատերին և կոտորում[103]։ Դեմիրչի-հասանլու ցեղը հիշատակվում է XVIII դարում Վրաստանին հպատակ ցեղերի թվում, որոնք, բնակվելով Ղազախում, հաճախ զինվորներ էին մատակարարում վրացական բանակին[104]։ Իսկ Քենգերլու ցեղը, որ պատկանում էր ղզլբաշ ցեղերի թվին, հիմնականում բնակվում էր Նախիջևանում, որը այդ ցեղի ցեղապետերի ժառանգական օլքան էր[105]։ Քենգերլու, Դեմիրչի-հասանլու, Յոլանի և մյուս ցեղերի ներկայությունը Ղարաբաղի ու Անդրկովկասի մյուս գավառների XIX դարի բնակչության կազմում հաստատում է հեղինակի վկայությունը հարևան խանություններից նրանց բերված լինելու մասին[106]։ Բացի Ներսեսովի հիշատակած ցեղերից, XIX դարի հեղինակ Ահմեդ-բեկ Ջևանշիրի վկայությամբ Ղարաբաղի խաները իրենց երկիրն են գաղթեցնում նաև փյուսյան, սաֆի-քյուրդ, ղըզըլ-հաջիլի, բոյ-ահմեդլի, սաաթլի և մյուս ցեղերին[107]։

Ներսեսովի ու մյուս հեղինակների վկայությունները ցույց են տալիս, որ Ղարաբաղի մահմեդական բնակչության թիվը զգալիորեն ավելանում է սկսած XVIII դարի կեսերից։ Խաները, ջանալով ամրացնել իրենց սոցիալ-քաղաքական դիրքերը Ղարաբաղում, բազմիցս կազմակերպում էին հարևան տարածքներում բնակվող քոչվոր ցեղերի բռնագաղթեր դեպի իրենց տիրույթները։

«Թարիխ-ե Սաֆի»-ի պատմագիտական արժեք ներկայացնող մասերից են Շուշի բերդի (կամ Փանահաբադի) հիմնադրմանը, կառուցմանն ու քաղաքական պատմության այլ հարցերին նվիրված հատվածները[108]։ Ներսեսովը չի ժխտում այն հանգամանքը, որ սկզբնական շրջանում Շուշիի մահմեդական բնակչությունը ավելի մեծ էր, բայց նա արձանագրում է նաև այն փաստը, որ հետզհետե ավելանում է բերդի ամրությանը ապավինած հայ բնակչության քանակը, այնպես որ հեղինակի օրոք՝ «1855 թ. քաղաքի բնակչության $^{2}/_{8}$ մասը կազմում էին հայերը, իսկ $^{1}/_{8}$-ը՝ շիա մահմեդականները»[109]։ Հեղինակը որոշ տեղեկություններ է հաղորդում Շուշիում հատվող «փանահաբադ» դրամների մասին, որոնց համաձայն նրանցում պարունակվում էր 1,5 միսղալ (1 միսղալը=4,64 գրամի) արծաթ, և 6 «փանահաբադը» հավասար էր ռուսական 1 մանեթի (շրջանառության մեջ գտնվող ռուսական դրամները-монета) և 8 «փանահաբադը» կազմում էր Ղարաբաղի 1 թուման[110]։

---

101 Չամչյան. Նշվ. աշխ., էջ 848։

102 Симеон Ереванци. Джамбр. М., 1958, с. 106.

103 И. Шопен. Ук. соч., с. 318.

104 Մելիքսեթ-բեկ. Նշվ. աշխ., էջ 132, 140։

105 И. П. Петрушевский. Ук. соч., с. 127.

106 Описание Карабагской провинции сост. полк. Ермоловым и Могилевским в 1823 г. Тифлис, 1866, владения Мехди Кули хана; Свод статистических данных, Елисаветпольская губерния.

107 Ахмед-бек Джеваншир. Ук. соч., с. 71.

108 Ներսեսով. Նշվ. ձեռ., էջ 85ա—86բ։

109 Նույն տեղում, էջ 86բ։

110 Նույն տեղում, էջ 85բ։

Ներսեսովի վկայությունը XVIII դարում «փանահաբադ» դրամի արժեքի մասին հաստատում են նաև մյուս սկզբնաղբյուրները, որոնց համաձայն այն հավասարվում էր 1 աբբասիի[111]։ XVIII դարում Անդրկովկասում շրջանառության [illegible] զանազան քաղաքներում (Շամախում, Գանձակում, Թավրիզում) հատվող աբբասիները, որոնք ունեին արծաթի բարձր բաղադրություն, բայց 1740-ականներին այն իջնում է մինչև 7,33 և 5,5 գրամի։ XVIII դարի կեսերին Անդրկովկասի խանություններից յուրաքանչյուրը հատում էր իր դրամը, որոնց արծաթի պարունակությունը բավական ցածր էր։ «Փանահաբադ»-ը Անդրկովկասի առավել կայուն արժեք ունեցող դրամներից էր և նրա շրջանառությունը մեծ չափով դուրս էր գալիս Ղարաբաղի խանության տարածքից[112]։ Այդ դրամը շրջանառության մեջ էր գտնվում մինչև XIX դարի կեսերը, թեև բավական արժեզրկվել էր։ XIX դարում այն համարժեք էր «10 շահիի»[113] կամ 15 կոպեկի[114]։

1780-ական թթ. Ռուսաստանը ջանում էր իր գերիշխանությունը տարածել Անդրկովկասի երկրների վրա և 1783 թ. պայմանագրով իր հովանավորության տակ է առնում Վրաստանը։ 1780-ական թթ. Ղարաբաղի հայ մելիքները ջանում էին ռուսական զորքերի օգնությամբ թոթափել Իբրահիմ խանի գերիշխանությունը[115]։ Պարսկաստանում նույն շրջանում ուժեղանում է Աղա Մուհամմադ խանը, որը իր հերթին ձգտում էր վերականգնել Իրանի տիրապետությունը իր նախկին անդրկովկասյան տիրույթների վրա։ Ղարաբաղի խանը, զգուշանալով Ռուսաստանի ու Իրանի կողմից օրեցօր ուժեղացող վտանգից, ամրացնում էր իր դիրքերը և նախապատրաստվում պաշտպանության։ Ունենալով իրենց երկրում հայ ազգաբնակչության ունեցած կարևոր քաղաքական ու տնտեսական դերից՝ Ղարաբաղի խաները մեծ ճկունություն էին հանդես բերում՝ երկու հզոր պետությունների՝ Ռուսաստանի ու Իրանի նկատմամբ վարած քաղաքականության մեջ։

1783 թ. Իբրահիմ խանը իր մոտ է կանչում ազգականներին ու իր դաշնակից Մելիք-Շահնազարին և հայտարարում, որ մտադիր է վերանորոգել ու ամրացնել Շուշի բերդը։ Բերդի պարիսպների վերակառուցումը, բացի պաշտպանական նպատակներից, անհրաժեշտ էր նաև նրա բնակչության թվի մեծացման պատճառով։ Իր այս մտադրությունը իրագործելու համար խանը մելիքներից պահանջում է 100-ական մարդ[116] և, քանդելով բերդի հին պարիսպները, «հմուտ վարպետների նախագծով 1 վարս (հմմտ. ռուս. «верст» երկարության միավորն է, որը=1 կմ-ից քիչ ավելի կամ 500 սաժենի) հեռու նոր պարիսպներ է կառուցում։ Ներսեսովի վկայությունը ցույց է տալիս, որ պարիսպների վերակառուցումը տևել է բավական երկար և ավարտվել 1789 թ.[117]։

Ներսեսովի երկում ընդարձակ տեղ է տրված Ղարաբաղի խաների ռազմական ձեռնարկումների ու արտաքին թշնամիների դեմ պայքարի պատմությանը։ Հեղինակը հավաստի տեղեկություններ է հաղորդում Իրանի գահին հավակնող Մուհամմադ Հասան խան Ղաջարի զորքերի Ղարաբաղ մտնելու և

---

111 Ռեզակուլի խան Հեդայաթ. նշվ. աշխ., էջ 297, Статистическое обозрение Персии, составленное подполковником И. Ф. Бларамбергом в 1841 году. СПб., 1853, с. 60.

112 История Азербайджана. Т. 1, Баку, 1958, с. 367.

113 Ռեզակուլի խան Հեդայաթ. նշվ. աշխ., էջ 297։

114 Ахмед-бек Джеваншир. Ук. соч., с. 72.

115 Այս հարցերը մանրամասն քննվում են Ա. Հովհաննիսյանի աշխատություններում. տե՛ս А. Р. Иоаннисян. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия. Ереван, 1947, он же. Иосиф Эмин. Ереван, 1945.

116 Армяно-русские отношения в 3-м тридцатилетии XVIII века. Т. 4, с. 252.

117 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 86ա։

Սուլթին պաշարելու վերաբերյալ[118]։ Թեև «Թարիխ-է Սաֆի»-ում չի նշվում այդ արշավանքի թվականը, սակայն այլ աղբյուրների տվյալները հնարավորություն են տալիս պարզելու այդ։ Իսկ Ռեզակուլի խան Հեդայաթը և թե ռուս պատմաբան Բուտկովը վկայում են 1757 թ. Ղարաբաղի խանությունը նվաճելու Մուհամմադ Հասան խանի ձեռնարկած անհաջող փորձի մասին[119]։

XVIII դարի 50-ականների վերջին Ղարաբաղին տիրելու փորձեր է անում նաև Ուրմիայի Ֆաթհալի խան Աֆշարը[120]։ Սիմեոն կաթողիկոսը նշում է, որ այդ արշավանքները տեղի են ունեցել 1761 և 1762 թթ., որոնցից վերջինը ժամանակ Ուրմիայի խանի կողմում Փանահ խանի դեմ կռվում էին Ղարադաղի Քյազիմ խանը և Վրաստանի Հերակլ թագավորը[121]։ Ներսեսովի «Թարիխ-է Սաֆի»-ում գտնում ենք այս վերջին արշավանքի հանգամանալից նկարագրությունը[122]։ Ներսեսովի վկայությամբ, Ղարաբաղի խանի դեմ կռվել են ելնում նաև Ջելեբերդի Մելիք Աթամն ու Թալիշի Մելիք Հովսեփը։ Այս տեղեկությունը կարևոր նշանակություն ունի, քանի որ վկայում է նշված մելիքների արդեն 1762 թ. Գանձակի խանության կողմերից Ղարաբաղ վերադարձած լինելու մասին։

Ներսեսովը, հենվելով Միրզա Ադիգյոզալ-բեկի վկայության վրա, պնդում է, որ երկար կռիվներից հետո Փանահ խանի ու Ֆաթհալի խանի միջև հաշտություն է կնքվում և բարեկամական կապերն ամրացնելու համար Իբրահիմ խալիլ աղան գնում է Ուրմիայի խանի մոտ։ Սակայն, ինչպես ցույց են տալիս այլ աղբյուրների վկայությունները[123] և դեպքերի հետագա ընթացքը, Ղարաբաղի խանը պատանդ էր տվել իր որդուն, որին Ֆաթհալի խանը իր հետ տանում է Ուրմիա։

Նույն թվականին Իրանի գահի հավակնորդներից Քերիմ խան Զենդը, ջանալով իրեն հպատակեցնել Ատրպատականի ու Անդրկովկասի խաներին, պայքարի է ելնում Ուրմիայի Ֆաթհալի խանի դեմ։ Այդ պայքարում Քերիմ խանի կողմում հանդես է գալիս նաև Ղարաբաղի Փանահ խանը։ Միայն երկարատև պաշարումից հետո Քերիմ խանին հաջողվում է հնազանդեցնել Ուրմիայի խանին[124]։ Հավաստի նկարագրելով այս դեպքերը՝ Ներսեսովը նշում է, որ Քերիմ խանը այնուհետև Ղարաբաղի խան է նշանակում Իբրահիմ խալիլ աղային, իսկ Փանահ խանին իր հետ տանում է Շիրազ՝ ուրախ ժամանակ անցկացնելու[125]։ Սակայն ավելի հավանական է թվում, որ Քերիմ խանը Փանահ խանին որպես պատանդ իր հետ տարած լինի Շիրազ, քանի որ նա պատանդ է վերցնում Ատրպատականի մյուս խաներին, ինչպես, օրինակ, Ղարադաղի Քյազիմ խանին, Խոյի Շահբազ խան Դումբուլիին[126]։

Ղարաբաղի խանությունը էլ ավելի հզորանում է Իբրահիմ խանի իշխա-

---

118 Նույն տեղում։

119 П. Г. Бутков. Ук. соч., ч. I, с. 243—244 Ռեզակուլի խան Հեդայաթ. նշվ. աշխ., էջ 37—38։

120 Ֆաթհալի խան Աֆշարը Ազատ խանի զորքի զորավարներից էր, որը Մուհամմադ Հասան խան Ղաջարի մահից (1758 թ.) հետո իրեն է հպատակեցնում Ատրպատականի խանությունները (տե՛ս В. Н. Левиатов. Ук. соч., с. 156).

121 Դիվան Հայոց պատմության. գիրք Ա—Բ, Թիֆլիս, 1893, էջ 17. գիրք Բ, էջ 57։

122 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 88ա—89ա։

123 А. Бакиханов. Гюлистан-ирам. Баку, 1926, с. 130.

124 Ըստ Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանի Քերիմ խանը 7 ամիս պաշարում է Ուրմիան (տե՛ս Դիվան Հայոց պատմության. գիրք Ա, էջ 60), իսկ ըստ Ռեզակուլի խան Հեդայաթի՝ 9 ամիս (տե՛ս Ռեզակուլի խան Հեդայաթ. նշվ. աշխ., էջ 74)։

125 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 89բ։

126 Դիվան Հայոց պատմության. գիրք Բ, էջ 61, նաև՝ Ռեզակուլի խան Հեդայաթ. նշվ. աշխ., էջ 74։

նության (1762—1806 թթ.) տարիներին։ 1780-ականների սկզբին Ղարաբաղի ձեռներեց խանը արշավանքներ է կազմակերպում դեպի Թավրիզ ու Խոյ[127]։

Անդրադառնալով հարևան խաների հետ Իբրահիմ խանի փոխհարաբերությունների հարցերին, Ներսեսովը նշում է, որ Իբրահիմ խանը «ոչ միայն ոչ ոքի չէր ենթարկվում, այլև ավագն էր Շաքիի, Շիրվանի, Գանձակի, Թավրիզի, Նախիջևանի, Արդեբիլի, Խոյի, Մարաղայի, Երևանի խաների ու կառավարիչների մեջ մինչև Արաքի ու Ատրպատականի սահմանագլուխը հանդիսացող Ղափլանքուհ [լեռներում] ընկած տարածքներում։ Դրա հետ մեկտեղ Իբրահիմ խանը Ավարիայի կառավարիչ Օմար խանի հետ բարեկամական ու ազգակցական կապեր էր հաստատել կնության առնելով նրա Աղա Բիքե անունով քրոջը և անհրաժեշտության դեպքում Դաղստանի երկրից զորք էր նրանից օգնություն ստանում»[128]։ Պետք է նշել, որ հեղինակը որոշ չափով չափազանցում է Ղարաբաղի խանի հզորությունն ու հեղինակությունը, թեև պատմական այլ սկզբնաղբյուրներում տեղեկություններ կան, որ իրոք, XVIII դարի 80-ական թթ. նրանից կախման մեջ էին գտնվում Գանձակի, Ղարադաղի, Շեքիի ու Նախիջևանի խանությունները, իսկ Ավարիայի, Արդեբիլի ու Խոյի խաները նրա դաշնակիցներն էին[129]։

1780-ականների սկզբից Ղարաբաղի Իբրահիմ խանի հավակնությունների առարկան էր Նախիջևանի խանությունը։ Նրա Աբբաս Ղուլի խանը Իբրահիմ խանի հովանավորության տակ էր գտնվում։ 1791 թ. Ղարաբաղի Իբրահիմ խանը արշավանք է կազմակերպում դեպի Նախիջևանի խանությունը, որի վերաբերյալ մանրամասն ու հավաստի տեղեկություններ կան «Թարիխ-ե Սաֆի»-ում։ Այդ արշավանքի դրդապատճառները հետևյալն էին։ Պարսկաստանի շահը դառնալու հավակնություններ ունեցող Աղա Մուհամմադ խանը 1791 թ. 10000-անոց զորքով շարժվում է դեպի Թավրիզ և պահանջում Ատրպատականի ու Անդրկովկասի խաների հպատակությունը։ Այդ երկրների մի շարք խաներ հնազանդվում են Պարսկաստանի տիրակալի պահանջին, որոնց թվում էր 1780-ականների վերջին Նախիջևանի խան դարձած Քյալբալի խանը[130]։ Հրաժարվում են հպատակություն հայտնել միայն Վրաստանի Հերակլ թագավորն ու Ղարաբաղի Իբրահիմ խանը[131]։ Վերջինս, որ ստեղծված իրավիճակից անհանգստացած օգնության էր կանչել Ավարիայի Օմար խանին լեզգիների զորքով, որոշում է վերականգնել իր գերիշխանությունը նախկինում իրեն հպատակ Նախիջևանի խանության նկատմամբ և արշավանք է կազմակերպում դեպի նրա տարածքը։ Ղարաբաղի Իբրահիմ խանի 1791 թ. նոյեմբեր—դեկտեմբեր ամիսներին դեպի Նախիջևան կատարած արշավանքի մասին հիշատակություններ կան Ղուկաս Կարնեցու հիշատակարանում[132]։ Ղարաբաղի խանի դեպի Նախիջևան կատարած արշավանքին մասնակցում է լեզգիների 3000-անոց գունդը։ Նախիջևանի Քյալբալի խանը Երևանի ու Խոյի խանություններից ուղարկված ջոկատների օգնությամբ պարտության է մատնում Իբրահիմ խանի գլխավորությամբ իր տարածքը ներխուժած զորքերին[133]։ Ներսեսովը, նկարագրելով արշավանքի ընթացքը, նոր տվյալներ ու արժեքավոր վկայություններ է տալիս հակառակորդների միջև տեղի ունեցած ընդհարման վայրի և նրանց զորքերի մասին։ Մասնավորապես, «Թա

---

127 Դիվան Հայոց պատմության, գիրք Ա, (Նոր շարք). Ղուկաս Կարնեցի, 1780—1785 թթ., Երևան, 1984, էջ 56։

128 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 90բ։

129 В. Н. Левиатов. Ук. соч., с. 157; П. Г. Бутков Ук. соч., ч. 2, с. 114.

130 Ռեզակուլի խան Հեդայաթ. նշվ. աշխ., հ. 9, էջ 286։ Օրինակք դրութեանց Ղուկաս կթղկ. Կարնեցվոյ. ՄՄ, ձեռ. 4501, էջ 369ա։

131 Վ. Ռ. Գրիգորյան. Երևանի խանությունը 18-րդ դարի վերջին. Երևան, 1958, էջ 150։

132 Դիվան Հայոց պատմության. հ. Ա—Բ, էջ 25. հ. Դ, էջ 532, 570։

133 Վ. Ռ. Գրիգորյան. նշվ. աշխ., էջ 150։

ռիխ-և Սաֆի»-ի հաղորդումներից իմանում ենք, որ գլխավոր ճակատամարտ տեղի է ունենում Ղարաբաղ վայրում։ Նախիջևանի խանի կողմում կռվում էին Օրևանի խանությունից եկած զիլան քրդերը և թաթար ղարափափախները, որոնց շնորհիվ էլ Քյալբաալի խանը հաղթում է[184]։

Զիլանիները XVIII դարում Երևանի խանությունում բնակվող քրդական ցեղերից էին[185], իսկ ղարափափախները՝ թաթարական ղազախ[186] ցեղի ստորաբաժանումներից[187]։ Հեղինակի տեղեկությունները պատկերացում են տալիս նաև Իբրահիմ խանի բանակի կազմի մասին, որը բաղկացած էր «չեթիք»[188] կոչված գնդից և մելիքների ու յուզբաշիների գլխավորած ջոկատներից։ Ներսեսովի վկայությունից երևում է, որ չնայած որոշ թուլացմանը, Խամսայի մելիքությունները շարունակում էին մասնակցել իրենց երկրի քաղաքական կյանքին ու խաների ձեռնարկած ռազմական գործողություններին։

Ներսեսովի «Թարիխ-և Սաֆի» աշխատությունը Ղարաբաղի XVIII—XIX դարերի պատմության կարևոր սկզբնաղբյուրներից է։ Նրա տեղեկությունները, որոնք հաճախ շարադրված են նկարագրվող դեպքերին ականատես հեղինակի ձեռքով, օգնում են ճշգրտել ու լրացնել այդ ժամանակաշրջանի պատմության մի շարք հարցեր։

## ИСТОРИЯ КАРАБАХА XVIII ВЕКА ПО «ТАРИХ-Е САФИ» МИРЗЫ ЮСУФА НЕРСЕСОВА

*КРИСТИНЕ КОСТИКЯН*

Резюме

Историографическое произведение «Тарих-е сафи», написанное армянским автором XIX в. Мирзой Юсуфом Нерсесовым на персидском языке, является одним из важнейших источников истории Карабаха XVIII в. Оно содержит ряд интересных и ценных сообщений, которые дополняют и уточняют некоторые факты, относящиеся к истории меликств Хамсы (так назывались пять армянских княжеств Карабаха) и Карабахского ханства. Автор подробно описывает некоторые моменты борьбы армянских меликов против насилия магометанских ханов Карабаха и сообщает важные сведения, которые отсутствуют в других источниках. Нерсесов в своем сочинении уделяет много внимания также борьбе карабахских ханов против их внешних врагов, в частности, против Шекинского Гаджи Челеби хана, царя Грузии Ираклия II, Урумийского Фатали хана Авшара, шаха Ирана Ага Магомет хана и т. д. В «Тарих-е сафи» есть важные сообщения о захватнических устремлениях карабахских ханов в отношении соседних стран и организованных ими военных походов в Нахичеванское ханство. Детальное описание отдельных моментов вышеназванных войн и столкновений содержит немало интересных сведений, дополняющих их историю. В «Тарих-е сафи» отражены также стремления и реальные шаги, предпринятые карабахскими ханами для усиления своей власти в стране с преобладающим армянским населением. С этой целью они неоднократно организовывали

---

184 Ներսեսով. նշվ. ձեռ., էջ 91։

185 И. Шопен. Ук. соч., с. 457.

186 Ղազախ ցեղը համարվում է թյուրքացած մոնղոլական-ուզբեկական ցեղի ճյուղերից (տե՛ս В. В. Бартольд. Сочинения. Т. 5, М., 1968, с. 212). Այդ ցեղի մի մասը Վրաստանի Գեորգի II-ի օրոք (1072—1089) դաղթեցվում է Հայաստանի հյուսիսային շրջանները (И. Шопен. Ук. соч., с. 535). Այդ ցեղը պատկանում էր ղղլբաշ 15 ցեղերի թվին. տե՛ս И. П. Петрушевский. Ук. соч., с. 92, 134).

187 И. Шопен. Ук. соч., с. 535.

188 Չերիք էին կոչվում Սեֆյան Պարսկաստանում քոչվոր ցեղերից հավաքագրվող ֆեոդալական զորագնդերը (տե՛ս И. П. Петрушевский. Ук. соч., с. 69).

переселения соседних тюркских и курдских кочевых племен в Карабах, в результате чего со второй половины XVIII в. здесь значительно увеличилось количество мусульманского населения.

## THE HISTORY OF KARABAGH IN THE 18th CENTURY ACCORDING TO THE «TARIKH-E SAFI» BY MIRZA YUSUF NERSESOV

*CHRISTINE KOSTIKYAN*

Summary

The historical work «Tarikh-e Safi», written in Persian by the Armenian author of the 18 th century Mirza Yusuf Nersesov, is one of the important sources of Karabagh history of 18th century. It contains a lot of interesting and valuable information that supplements with new details and specifies the facts concerning the history of Khamsai Melikutiuns (the five Armenian Principalities of Karabagh) and Karabagh Khanate. The author describes in detail some points of the struggle of Armenian meliks (feudal landlords) against the violences of the Mohammedan khans and reports some important information concerning it that we cannot find in other historical sources. Nersesov has alloted a considerable part of his work—the description of the struggle of Karabagh khans against the invasions of their external enemies, in particular, Haji Chelebi khan of Shaki, Herakl the 2nd, the king of Georgia, Fatali khan Afshar of Urum and Agha Muhammad khan, the shah of Persia. There are also important reports about the expansionist policy of the Karabagh khans with respect for the neighbouring countries and their compaigns against them. The detailed description of these affairs and wars supplies a lot of new material for the addition to their history. The «Tarikh-e Safi» reflects also the aspirations of Mohammedan khans of Karabagh to strengthen their rule in the land with a predominant Armenian population by the migration of the Turkish and Kurdish nomadic tribes from the neighbouring countries to their Khanate. As a result in the second half of the 18th century the muslim population if Karabagh increased to a considerable extent.